ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1926—1932 թթ.)

ՅՈԼԱԿ ԴԵՎՈՐԳՅԱՆ

Կուսակցական կադրերի պատրաստման լենինյան սկզբունքներն իրենց ստեղծագործական արտահայտությունը գտան ՍՄԿԿ XXV համագումարում։ Ինչպես համագումարին Կենտկոմի տված հաշվետու զեկուցման մեջ նշեց Լ. Ի. Բրեժնևը, «Այն հզոր լծակը, որով կուսակցությունը ներգործում է հասարակական զարգացման ընթացքի վրա, նրա **կադրային-բաղադրականությունն** *է»*[1]*։ Այդ իսկ պատճառով Լ. Ի. Բրեժնևը նոր սրությամբ դրեց փորձված ու տեսականորեն հասուն ղեկավար աշխատողների է՛լ ավելի մեծ ռեզերվ ունենալու խնդիրը։ Զեկուցման մեջ հատկապես նշվեց այն հանգամանքը, որ «...հարկավոր է հիշել թե՛ անցյալի փորձը և թե՛ մտածել բարձրորակ կադրերի պատրաստման նոր, արդիական ձևերի մասին»*[2]*։ Ղեկավարվելով «անցյալի փորձը հիշելու» մասին կուսակցության պահանջով, համառոտակի անդրադառնանք կուսսովետական կադրերի պատրաստման ու վերապատրաստման ուղղությամբ Հայաստանի կոմկուսի գործունեության մի ժամանակահատվածին։*

Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության կիրառումը պահանջում էր վերանայել կուսակցական-սովետական կադրերի պատրաստման գործի բովանդակությունը, որը պետք է համապատասխաներ առաջադրված նոր խնդիրներին։ Անհրաժեշտ էր կադրեր պատրաստել գյուղատնտեսական և արդյունաբերական շրջանների կուսակցական ու սովետական աշխատանքի տարբեր օղակների համար։

Անցել էր Հայաստանում ղեկավար կադրերի պատրաստման առաջին շրջանը, որն ընդգրկում էր 1920—1925 թթ.։ Հենվելով արդեն ձեռքբերված փորձի վրա, կարելի էր փնտրել նոր ձևեր ու մեթոդներ և, դրանք կիրառելով, կուսակցությանը տալ նոր, ավելի գրագետ, բարձր պատրաստականություն ունեցող գործիմաց կադրեր։

Քննարկելով պետական ապարատի ռացիոնալիզացիայի արդյունքներն ու հեռանկարները, ՀԿԿ ԿՎՀ պլենումը (1926 թ. մայիս) Բանգյուղտեսչությանը հանձնարարեց հատուկ ուշադրություն դարձնել պետական ապարատում աշխատողների որակի բարելավմանը։ Խորհուրդ էր տրվում սովետական

---

[1] *Լ. Ի. Բրեժնև, ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը և կուսակցության հերթական խնդիրները ներքին ու արտաքին քաղաքականության բնագավառում (Զեկուցում ՍՄԿԿ XXV համագումարում 1976 թ. փետրվարի 24-ին), Երևան, 1976, էջ 115։*

[2] *Նույն տեղում, էջ 117։*

ապարատի ու պետական հիմնարկների ստորին աշխատողների վերապատրաստման նպատակով բանալ կարճատև դասընթացներ[3]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ուշադրության կենտրոնում էր նաև Հայաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար կադրեր պատրաստելու հարցը, որի լուծումը մեծապես կնպաստեր նրանց շրջանում տարվող աշխատանքների բարելավմանը։ Նման դասընթացներ ստեղծվում էին հատկապես ադրբեջանցիներով ու ռուսներով բնակեցված շրջաններում։ Ի դեպ, ազգային փոքրամասնություններից տեղում որակյալ կադրեր պատրաստելու համար անհրաժեշտ պայմաններ չունենալու պատճառով, սկսած սովետական կարգերի հաստատման առաջին տարիներից, ՀԿ(բ)Կ Կենտկոմի խնդրանքով և ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի ցուցումով, Ադրբեջանի և Վրաստանի կուսսովետական դպրոցներում իրենց տեսակն պատրաստականությունն էին բարձրացնում ու կատարելագործում հանրապետության կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների ռուս ու ադրբեջանցի հարյուրավոր անդամներ, անկուսակցական ակտիվիստներ։ Հայաստանի կուսսովետական դպրոցներն ու դասընթացներն իրենց հերթին անգնահատելի ծառայություն են մատուցել Ադրբեջանի ու Վրաստանի հայաբնակ շրջանների կուսակցական ու սովետական օրգանների տարբեր օղակներում աշխատելու համար կադրեր պատրաստելու և վերապատրաստելու գործին։

Հանրապետության համար կուսակցական և սովետական կադրերի պատրաստման գործում մեծ է 26 կոմիսարների անվան Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի դերը, որի ստեղծումը (1923 թ. Թիֆլիս), իսկ ապա նաև առաջին շրջանավարտներ տալը, որ տեղի ունեցավ 1926 թ. Հունվարին, խոշոր իրադարձություն էին երկրամասի կուսակցական կազմակերպության կյանքում։

Շրջանավարտներին հղած ողջույնի հեռագրում ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմը որում էր. «Այն, ինչ դուք ստացել եք համալսարանում, պետք է հաղորդեք մեր երկրամասի աշխատավորներին։ Դուք հանդիսանում եք մեր կուսակցության կրտսեր հրամկազմը, գյուղում տարվող աշխատանքի պրակտիկ ղեկավարները»[4]։

Իր գոյության առաջին 10 տարիների ընթացքում համալսարանի հիմնական ֆակուլտետները տվեցին 755 շրջանավարտ։ Համալսարանին կից ստեղծված տարբեր դասընթացներն ավարտեցին 577 հոգի։ Այդ նույն ժամանակաշրջանում համալսարանի օժանդակությամբ գործող Անդրերկրկոմին կից ղեկավար աշխատողների վերապատրաստման կարճատև դասընթացներին մասնակցել են ևս 1665 ակտիվիստներ։ Համալսարանի հիմնական ֆակուլտետների շրջանավարտների մեջ էին 223 հայ կոմունիստներ[5]։

Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի մեծագույն վաստակն այն էր, որ նա կարողացավ պատվով կատարել կուսակցական ու սովետական կադրերի պատրաստման ուղղությամբ կուսակցության առաջադրած խնդիրները և իր սաներին դաստիարակեց լենինյան կուսակցության մեծ գործին

---

3 «Խորհրդային Հայաստան», 20. V. 1926։

4 «Заря Востока», 8.VI.1926.

5 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի (այսուհետև՝ ՄԼԻ) վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 128, ց. 1, գ. 409, թ. 12։

անհուն նվիրվածության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի, Անդրկովկասի և մեր ամբողջ երկրի ժողովուրդների բարեկամության ու եղբայրության ոգով։

Հավանություն տալով ներկուսակցական դեմոկրատիայի մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումի դիմումին, կուսակցության XIV հայտագումարը (1925 թ. դեկտեմբեր) առաջարկում էր բարձրացնել կուսակցական լայն մասսաների ակտիվությունը, ակտիվի որակը, մասնավորապես նրա տեսական մակարդակը և պատրաստել կուսակցական նոր կադրեր։ Սա կուսակցական բարձրագույն օրգանի դիրեկտիվն էր, որով պետք է ղեկավարվեին նրա բոլոր կազմակերպությունները։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ գնալով մեծանում էր առաջ քաշվող հատկապես երիտասարդ կոմունիստների թիվը։ Այսպես, կուսակցական բջիջների 1926 թ. ընտրությունների ժամանակ նրանց 156 բյուրոների 595 անդամներից առաջին անդամ ընտրվածները կազմում էին մոտ 65%-ը՝ 309 հոգի։ Նրանցից 391-ը ՀամԿ(բ)Կ շարքերն էին ընդունվել 1920—1924 թթ.։ Կուսակցական բջիջների 325 քարտուղարներից 197-ը ընտրվել էին առաջին անդամ։ Դա կազմում էր ընդհանուր թվի 66%-ը։ Երևանի, Լենինականի, Դիլիջանի, Վաղարշապատի (Էջմիածին) և Զանգեզուրի դավկոմների 117 անդամներից առաջին անգամ էին ընտրվել 48-ը կամ ընդհանուր թվի 41%-ը։ Նրանցից բանվորներ էին 38-ը, գյուղացիներ՝ 12-ը, իսկ ծառայողներ՝ 67-ը։ 1926 թ. ղեկավար աշխատանքի առաջ քաշված 67 հոգուց բանվորներ էին 32-ը, իսկ գյուղացիներ՝ 35-ը։ Նրանց 75%-ը ՀամԿ(բ)Կ շարքերն էր ընդունվել 1924—1926 թթ.[6]։ Միայն 1927—1931 թթ. ՀԿԿ կենտրոնական կուսդպրոցը տվեց ավելի քան 200 շրջանավարտ։

Նոր կադրերի պատրաստման, առաջքաշման և կուսակցական մասսաների դաստիարակության ուղղությամբ ծավալած աշխատանքների բարելավումը զգալիորեն աշխուժացրեց կուսակցական բջիջների գործունեությունը, հետևաբար նաև բարձրացրեց կուսակցական աշխատանքի մակարդակն ամբողջությամբ։ Կարևորն այն էր, որ բջիջներն անցան աշխատանքի ծրագրային ձևին։ Առաջին պլան էր մղվում ընդունած որոշումների կատարմանը հասնելու սկզբունքը, որովհետև հիմնականում դրանից էր կախված բջիջների աշխատանքի աշխուժացումը։ Կուսկազմակերպության առջև կոմունիստ ղեկավարի պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկված միջոցառումները բխում էին որոշումների կատարումն ապահովելու խնդրից։ Վ. Ի. Լենինը գտնում էր, որ մարդկանց և գործի փաստական կատարման ստուգումն է միայն «ամբողջ աշխատանքի, ամբողջ քաղաքականության մեխը»[7]։ Մարդկանց ու գործերի իրական կատարման ստուգման լենինյան սկզբունքը կուսակցական ու սովետական ապարատի աշխատանքների բարելավմանն ուղղված միջոցառումների ելակետն է։

Նոր ամրապնդվող պետական-օրգանների ստորին օղակներում տեղ գտած թերությունները վերացնելու գործում հաջողության կարող էին հասնել այն կուսակցական կազմակերպությունները, որոնք ղեկավարում էին լենինյան գաղափարներով զինված, սոցիալիզմի ու հեղափոխության գործին նվիրված

---

6 «Խորհրդային Հայաստան», 10։ IX։ 1927։

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 265։

կադրեր։ Այդ հատկապես կարևոր էր այն պատճառով, որ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «...քաղաքական ղեկավարը պատասխանատու է ոչ միայն այն բանի համար, թե ինչպես է ղեկավարում, այլև այն բանի համար, թե ինչ են անում նրանք, որոնց ղեկավարում է նա»[8]։ Ահա թե ինչու էր անհրաժեշտ կուսակցական ու սովետական ակտիվի գաղափարական կոփվածությունը, քաղաքական պատրաստականության բարձրացումն ու գործնական աշխատանքի փորձի ձեռքբերումը։

Կուսակցական-պրոպագանդիստական աշխատողներին օգնելու նպատակով, ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ, 1927 թ. ամռանը Ծաղկաձորում բացվեցին պրոպագանդիստների 3-ամսյա դասընթացներ, որոնցում սովորում էին Հայաստանի բոլոր գավառների կուսակցական-կոմերիտական 147 աշխատողներ։ Բանվոր պրոպագանդիստների դասընթացներում ընդգրկված 42 ունկընդիրներ պետք է ծանոթանային պրոպագանդիստական աշխատանքի հիմնական գծերի, քաղաքատնտեսության, նոր տնտեսական քաղաքականության, արհմիութենական շարժման պատմության հարցերի հետ։ Կոմերիտական պրոպագանդիստների (54 ունկնդիրներ) դասընթացների նպատակն էր պատրաստել շրջանային մասշտաբի կոմերիտական աշխատողներ, իսկ կանանց (21 հոգի) դասընթացներինը՝ որակյալ կին աշխատողներ պատրաստել գյուղական և գործարանային կազմակերպությունների համար։ Գործում էին նաև շրջիկ դպրոցների վարիչների (30 հոգի) դասընթացներ[9]։

Երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում ավելի սրվեց տրոցկիստական-զինովևական բլոկի սկսած ներկուսակցական պայքարը։ Այդ բլոկին ջախջախելու համար անհրաժեշտ էր կադրերին զինել մարքսիստական հարուստ գիտելիքներով, կոփել ու նախապատրաստել գաղափարական պայքարի համար։ Բարձրացան կուսակցական դպրոցներ ընդունվողներին առաջադրվող պահանջները։ Եթե կուսակցական դպրոցների ու դասընթացների ստեղծման առաջին տարիներին գրանցում ընդունվում էին կիսագրագետ, նույնիսկ հեղափոխական պայքարի որոշ փորձ ունեցող անգրագետ անկուսակցականներ, ապա այժմ մարտական փորձից բացի, որոշակի պահանջներ էին առաջադրվում հանրակրթական գիտելիքների ու քաղաքական պատրաստականության իմաստով։ Սահմանափակվում էր անկուսակցականների ընդունելությունը։ Բացառություն էին կազմում դաշտահի մոտ աշխատող բանվորներն ու արորի մաճը բռնած գյուղացիները։ Կուսակցական ու կոմերիտական որոշ ստաժից բացի, ընդունվողները պետք է ունենային նաև կուսակցական, սովետական, արհմիութենական կամ այլ հասարակական աշխատանքի փորձ։ Նման պահանջներ առաջադրվում էին նույնիսկ գավառային ու շրջանային կուսդպրոցներ ընդունվողներին։ Հանրապետության փոքրաթիվ կուսակցական կազմակերպությունը, իհարկե, չէր կարող հիշյալ դպրոցներն ապահովել բոլոր պահանջները բավարարող անհրաժեշտ թվով սովորողներով։ Այդ պատճառով էլ սկզբում քիչ չէին բացառությունները։ Չնայած դրան, նույնիսկ կուսակցական կոմիտեների երաշխավորագրերով ուսման ուղարկված շատ ակտիվիստներ ուսուցումից մնում էին դուրս։

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 21—22։

9 «Խորհրդային Հայաստան», 6. VII, 15. VII. 1927։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը մեծ ուշադրություն էր դարձնում կոմունիստների և անկուսակցական ակտիվիստների քաղաքական դաստիարակության գործին։ 1927/1928 ուս. տարում հանրապետության (առանց Մեզրիի գավառի) միայն նորմալ և կրճատ տիպի քաղգրագիտության դպրոցներում իրենց քաղաքական գիտելիքներն էին հարստացնում 1613 կոմունիստներ և 319 կոմերիտականներ, այդ թվում՝ շուրջ 250 կին ակտիվիստներ։ Սովորողների մեջ էին նաև ազգային փոքրամասնությունների 85 ներկայացուցիչներ[10]։

1926—1932 թթ. լուրջ քայլեր արվեցին կուսակցական-սովետական ղեկավար կադրերի պատրաստման ու վերապատրաստման ուղղությամբ։ Այդ նպատակով ստեղծված առաջին ու երկրորդ աստիճանի կուսսովետական դպրոցներին զուգահեռ պարբերաբար գործող պրոպագանդիստների, կուսակցական, սովետական ու կոմերիտական ակտիվի պատրաստման և վերապատրաստման դասընթացներով անցած հազարավոր ակտիվիստներ թարմություն հաղորդեցին կուսակցական ու սովետական կազմակերպությունների գործունեությանը, այն դարձնելով ավելի արդյունավետ ու նպատակասլաց։

1926—1932 թթ. գործող կուսսովետական դպրոցների մեջ ուրույն տեղ ունեին ՀԿ(բ)Կ Կենտկոմին առընթեր երկրորդ աստիճանի կենտրոնական և կուսակցության Երևանի կոմիտեի առաջին աստիճանի կուսակցական դպրոցները։ Դրանցում ընդգրկված հարյուրավոր ունկնդիրներ, հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, ուսումնասիրում էին կուսակցության ներքին ու արտաքին քաղաքականությունը, կոմունիստական կուսակցության և հեղափոխությունների պատմությունը, պատմական մատերիալիզմի ու քաղաքատնտեսության հարցերը, ծանոթանում կուսակցական ու սովետական աշխատանքի նոր ձևերին ու մեթոդներին։

Կոմունիստների, կոմերիտականների ու անկուսակցական ակտիվիստների քաղաքական գրագիտության բարձրացման և անգրագիտության վերացման գործում մեծ դեր խաղացին կուսսովետական երեկոյան դպրոցները, որոնք ստեղծվել էին կուսակցական կոմիտեներին և խոշոր կուսբջիջներին կից։ 1927/1928 ուս. տարում նրանց թիվը հասնում էր 13-ի։ Այդ հաստատությունների 491 շրջանավարտներից ՀամԿ(բ)Կ անդամ-թեկնածուներ էին 400-ը, կոմերիտականներ՝ 53-ը։ Սովորողներից բանվորներ էին 110, իսկ գյուղացիներ՝ 381 հոգի։ Նրանցից 40-ը կանայք էին[11]։ Տարեցտարի ավելանում էր կադրերի պատրաստման դպրոցների թիվը, բարելավվում ընդունվողների կազմը, կատարելագործվում էին ուսումնա-մեթոդական ու դաստիարակչական աշխատանքները։ Չնայած դժվարություններին, Լենինականի, Ղարաքիլիսայի (Կիրովական), Զանգեզուրի և Վաղարշապատի կուսսովետական դպրոցները որոշակի ավանդ մուծեցին հանրապետության կուսակցական ու սովետական ղեկավար կադրերի պատրաստման գործում։ Բոլոր կուսակցական դպրոցներում պարապմունքներն ընթանում էին միասնական ծրագրով և ուսումնական պլանով։ Ամենուրեք կուսդպրոցների աշխատանքներում ներգրավվել էին լավագույն մանկավարժներ։

---

10 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 317, թ. 18։

11 Նույն տեղում։

Ներկուսակցական պայքարի պայմաններում առաջադրելով կուսակցության լենինյան գիծը անաղարտ պահելու, սոցիալիստական արշավը գյուղում ուժեղացնելու, սոցիալիստական շինարարության գործում աշխատավոր մասսաներին ակտիվորեն ներգրավելու և կարևոր մի շարք այլ խնդիրներ, ՀԿ(բ)Կ VI համագումարը (1929 թ. հունվար) միաժամանակ ընդգծեց կադրերի վերարտադրման կարևորությունը։ Բանվորների կազմակերպված առաջքաշումը, կանանց, երիտասարդության և ազգային փոքրամասնությունների ակտիվի պատրաստումը համագումարը համարեց անհրաժեշտ խնդիր և հանձնարարեց Կենտկոմին հատուկ ուշադրություն դարձնել կուսակցական-սովետական կադրերի պատրաստման ու վերապատրաստման գործին։

Քննարկելով ՀԿ(բ)Կ VI համագումարի արդյունքները, կենտրոնական կուսակցական դպրոցի կոմբջիջի ժողովը հավանություն տվեց ընդունված որոշումներին և ձեռնամուխ եղավ դրանց կատարմանը։ Համագումարը, նշված է ժողովի ընդունած որոշման մեջ, թշնամական գաղափարախոսությունների դեմ պայքարի հարցում ճիշտ կողմնորոշելով մեզ, շեշտեց, որ կուսակցությունը պետք է ուժեղացնի պայքարը աջ թեքման՝ մեր երկրում կապիտալիզմի վերականգնման փորձերի, հաշտվողականության ու տեղական այլ դրսևորումների դեմ[12]։

Վերակառուցման շրջանի բարդ և դժվարին խնդիրների լուծումը հրամայաբար դնում էր յուրաքանչյուր կոմունիստի քաղաքական-գաղափարական պատրաստականության, մասսաների ընդհանուր կուլտուրական և տեսական մակարդակի բարձրացման հարցերը, որովհետև միայն այդ ճանապարհով ավելի հաջող կընթանար օպորտունիզմին հաղթահարելու գործն ու կարագանային սոցիալիզմի կառուցման տեմպերը։ Այդ էր պատճառը, որ Հայաստանի կոմկուսի Կենտկոմն իր առաջնահերթ խնդիրներից մեկն էր համարում կուսլուսավորության ցանցի հաջող կազմակերպումը և ուսումնական պրոցեսի բարձր մակարդակով անցկացումը։ Տարեցտարի ընդլայնելով քաղաքական լուսավորության ցանցը, հանրապետության կուսակցական կոմիտեները հոգ էին տանում բոլոր կոմունիստներին ու անկուսակցական ակտիվիստներին դրանում ընդգրկելու մասին։

Քաղաքական լուսավորության ցանցը կարիք ուներ բարձրորակ պրոպագանդիստների, որոնց պակասը մասամբ լրացնում էին կուսակցական դպրոցներն ու կոմունիստական համալսարանները։ Չնայած նման ուսումնական հաստատությունների առկայությանը, հանրապետությունը դեռևս ի վիճակի չէր բոլոր տիպի խմբակները, դասընթացները և դպրոցներն ապահովելու գոնե միջնակարգ կրթություն ունեցող քաղաքականապես գրագետ պրոպագանդիստներով։ Այնուամենայնիվ, նրանց թիվը գնալով ավելանում էր և արդեն 1931/1932 ուս.տարում 492 պրոպագանդիստներից 259-ը (52,6%-ը) ավարտել էին կոմհամալսարանները կամ երկրորդ և առաջին աստիճանի կուսսովետական դպրոցները։ Ընդհանուր թվի մեջ էին 33 ադրբեջանցիներ, 4 ռուսներ և 4 քրդեր[13]։

Ինչպես տեսնում ենք, կուսակցական ուսումնական հաստատությունների, այդ թվում հանրապետության կուսակցական դպրոցների, պատրաստած կադ-

---

12 «Խորհրդային Հայաստան», 14. II. 1929։

13 ՄԱԻ հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 10, գ. 307, թ. 136։

բերն այս գործում ևս արժանի ներդրում ունեին։ Գլխավորելով արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման ու աշխատավորական կոլեկտիվների առջև դրված մյուս խնդիրների հաջող իրականացման համար ծավալված պայքարը, կադրերի պատրաստման հաստատությունների շրջանավարտները եռանդով լծվել էին նաև կուսակցական ու անկուսակցական մասսաների քաղաքական և գաղափարական դաստիարակության գործին, որը սոցիալիզմի կառուցման տվյալ էտապում խիստ կարևոր համակուսակցական խնդիր էր։

Ղեկավար կադրերի պատրաստումը, անցնելով տարբեր էտապներ, կատարելագործվում և հարմարեցվում էր ժամանակի պահանջներին։ Կուսսովետական դպրոցների ու կոմունիստական համալսարանների ցանցը, սակայն, չէր կարող բավարարել կադրերի պատրաստման օրավուր աճող պահանջները։ Հաշվի առնելով այդ, ՀամԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ կազմակերպվեց ակտիվի հեռակա ուսուցում։ Կուսակցական ուսումնական հաստատություններին կից ստեղծվեցին հեռակա բաժիններ։ Հայաստանում այդ գործի սկիզբը դրվեց 1929 թ.։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության որոշմամբ կենտրոնական կուսդպրոցին կից ստեղծված հեռակա կուսդպրոցի առաջին կուրսն ընդունվեցին 70 սովորողներ՝ կուսակցական, սովետական, կոմերիտական օրգանների ստորին օղակների աշխատողներ։ Ուսումնական տարին սկսվեց փետրվարին և ավարտվեց հուլիսին, իսկ օգոստոսին տեղի ունեցան ամառային քննությունները։ Հեռակա կուսդպրոցի աշխատանքները ղեկավարում էր առարկայական հանձնաժողովը, որի մեջ, կենտրոնական կուսդպրոցի ուսմասվարի գլխավորությամբ, մտնում էին նաև մի քանի դասատուներ։ Հեռակա ուսուցման ծրագիրը կազմված էր կուսսովետական դպրոցի ծրագրերի հիման վրա։ Նախատեսվում էր երկրորդ ուսումնական տարվանից սովորողների թիվը հասցնել 150-ի, այդ թվում՝ 25-ական հոգի պետք է գործուղվեին Վրաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպություններից[14]։

Հեռակա ուսուցումն այնպիսի թափ ստացավ, որ արդեն 1931 թ. մայիսին ավելի քան 1000 ակտիվիստներ ընդգրկված էին հեռակա ուսուցման ցանցում, այդ թվում՝ երկրորդ աստիճանի կուսդպրոցների 700 հեռակայողներ համախմբված էին հանրապետության 32 ռադիոլսարանների շուրջը, իսկ 202 հոգի սովորում էին Անդրկովկասյան կոմունիստական համալսարանի հեռակա դասընթացներում։ 29 հոգի ընդգրկված էին Յա. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանի, իսկ 8-ական հոգի՝ Ժուռնալիստիկայի պետական ու Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտների հեռակա բաժիններում[15]։

1928 թ. ամռանը ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսակտիվի 2,5-ամսյա դասընթացներն ավարտեցին 150 հոգի, այդ թվում՝ 40 ադրբեջանցիներ։ Ըստ զբաղմունքի՝ 28-ական սովորողներ կուսակցական ու սովետական աշխատողներ էին, 15-ը՝ պրոպագանդիստներ, 12-ը՝ կին աշխատողներ[16]։ Հաջորդ տարում՝ 1929 թ. ամռանը, Կենտկոմին կից կուսաշխատողների պատրաստման ու վերապատրաստման կարճատև դասընթացներն ավարտեցին 244 հոգի[17]։

---

14 Նույն տեղում, ց. 13, գ. 341ա, թթ. 4, 18—19։

15 «Խորհրդային Հայաստան», 20. V. 1931։

16 Մշի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 344, թ. 34։

17 Նույն տեղում, ց. 14, գ. 61, թ. 8։

Ինչպես երևում է բերված թվերից, նախորդ տարվա համեմատությամբ մոտ 100 հոգով ավելացել էր դասընթացների միջոցով պատրաստվող կադրերի թիվը։ Գյուղական ակտիվի պատրաստման ու վերապատրաստման գործը շարունակում էր մնալ ՀԿ(բ)Կ Կենտկոմի ուշադրության կենտրոնում։ Կուսակտիվի 1930 թ. 1,5—2-ամսյա ամառային դասընթացներով անցան 350 հոգի, որոնցից 40-ը՝ ադրբեջանցիներ[18]։

ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի բյուրոյի 1931 թ. ապրիլի 26-ի որոշմամբ ամբողջ Անդրկովկասի համար սահմանվում էր կուսակտիվի պատրաստման ու վերապատրաստման միասնական ցանց։ Որոշման մեջ նշվում էր, որ Անդրկովկասյան կոմունիստական համալսարանից ու ստացիոնար կուսակցական դպրոցներից զատ, որոնք հանդիսանում են կադրերի տևական պատրաստման հիմնական ձեր, պետք է ծավալել կուսակտիվի վերապատրաստման անընդհատ գործող դասընթացների ցանց։ Հիշյալ որոշման համաձայն, ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարության 1931 թ. մայիսի 17-ի որոշմամբ Հայաստանում սահմանվում է կուսակտիվի վերապատրաստման հետևյալ սիստեմը (նաև նախատեսվում էին սովորողների թվական կազմն ու ուսման ժամկետները).

ա) պրոպագանդիստների 2-ամսյա դասընթացներ՝ 70 սովորողներով (այդ թվում 20 ադրբեջանցիներ)։

բ) արտադրական ու գյուղական կուսակտիվի 2-ամսյա դասընթացներ՝ 400 մարդու համար (այդ թվում արտադրական 100 և կոլխոզային 300 ակտիվիստներ)։ Սովորողների թվում պետք է լինեին 40 ադրբեջանցիներ և 15 ռուսներ։ Կանայք պետք է կազմեին սովորողների ընդհանուր թվի 30%-ը։

գ) մշտական նպատակային 2-ամսյա դասընթացներ։

Այս երեք խմբերի պարապմունքները պետք է սկսվեին հունիսի 1-ից։

դ) 10-օրյա դասընթաց-կոնֆերանսներ։ Սրանց առաջին նստաշրջանը նախատեսվում էր 1075, իսկ երկրորդ նստաշրջանը՝ 250 մարդու համար։ Պարապմունքները պետք է սկսվեին համապատասխանաբար հունիսի 1-ից և 20-ից[19]։

Կուսակցական ղեկավար կադրերի ու կուսակտիվի պատրաստման ու վերապատրաստման գործի նկատմամբ Անդրերկրկոմի ցուցաբերած գործնական քայլերի մասին վկայող շատ փաստաթղթերից բերենք միայն երկուսը։

Քննարկելով կուսակտիվի վերապատրաստման գործի վիճակն անդրկովկասյան հանրապետություններում, ՀամԿ(բ)Կ Անդրերկրկոմի քարտուղարության 1931 թ. օգոստոսի 18-ի նիստը նշում էր, որ, չնայած այդ ուղղությամբ տարած որոշ աշխատանքներին, որոնց շնորհիվ նախորդ տարվա համեմատությամբ գրեթե 2 անգամ ավելի մարդ է անցել վերապատրաստման դասընթացներով, այնուամենայնիվ, կուսկադրերի, հատկապես գյուղական ակտիվի վերապատրաստման գործը դեռևս պատշաճ տեղ չի գրավել կուսակցական օրգանների գործունեության մեջ, որը վտանգի տակ է դնում կադրերի վերապատրաստման վերաբերյալ Անդրերկրկոմի որոշման կատարումը[20]։ Այնու-

18 Նույն տեղում, գ. 15, գ. 289, թ. 15։

19 Նույն տեղում, գ. 17, գ. 100, թ. 19։

20 Նույն տեղում, գ. 18, գ. 108, թ. 13—14։

հետև շարադրվում էին կուսկադրերի վերապատրաստման գործը բարելավելուն ուղղված միջոցառումները։

Լսելով ՀամԿ(բ)Կ Անդրբերկրկոմի՝ կադրերի պատրաստման վերաբերյալ որոշման կատարման ընթացքի մասին Ա. Խանջյանի հաղորդումը, երկրկոմի քարտուղարությունը 1931 թ. օգոստոսի 5-ին որոշեց 3 օրվա ընթացքում Ադրբեջանից Հայաստան՝ ղեկավար ախատանքի գործուղել 10 ադրբեջանցի (5 հոգի շրջանային և 5 հոգի գյուղական մասշտաբի) ու 5 հայ (շրջանային մասշտաբի) կոմունիստներ, իսկ Վրաստանից՝ 10 ղեկավար աշխատողներ[21]։

Ղեկավար կադրերի, հատկապես կուսակտիվի վերապատրաստման գործում մեծ դեր խաղացին նաև 6-ամսյա գիշերային կուսսովետական դպրոցները։

1932 թ. ամռանը 10-օրյա, 1—3-ամսյա, ինչպես նաև անընդհատ գործող դասընթացներին մասնակցեցին գյուղական ու արտադրական ստորին կազմակերպությունների ակտիվի ու շրջանային ղեկավար աշխատողների 1750 ներկայացուցիչներ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից Դարաչիչակի (Ծաղկաձոր) 3-ամսյա (հունիս-օգոստոս) դասընթացներն ավարտեցին կոլտնտեսային (150 հոգի), սովխոզային (34), արտադրական (75), տրանսպորտային (13) բջիջների ակտիվիստներ ու շրջկոմների և շրջգործկոմների 11 աշխատողներ։ 283 շրջանավարտներից 12-ը կանայք էին։ Ռուսներ էին 9-ը, իսկ ադրբեջանցիներ՝ 41-ը[22]։

Հայաստանի կոմկուսի այս ժամանակաշրջանի կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ուղղված գործունեությունը նոր նախադրյալներ ստեղծեց կուսսովետական դպրոցների ու դասընթացների ցանցի ընդլայնման, դրանց աշխատանքների հետագա կատարելագործման, հանրապետության կուսակցական, սովետական և գաղափարական աշխատողների ջոկատը նոր, որակյալ ղեկավար կադրերով համալրելու համար։

ПОДГОТОВКА И ПЕРЕПОДГОТОВКА ПАРТИЙНО-СОВЕТСКИХ КАДРОВ В АРМЕНИИ (1926—1932 гг.)

ЦОЛАК ГЕВОРКЯН

Резюме

Ленинские принципы подготовки партийно-советских кадров нашли отражение в отчетном докладе ЦК XXV съезду КПСС. Как говорил на съезде тов. Л. И. Брежнев, «могучим рычагом, посредством которого партия воздействует на ход общественного развития, является ее *кадровая политика*».

На всех этапах своей деятельности Коммунистическая партия постоянно заботилась о подготовке кадров, для чего подлинные возможности были созданы только после победы Великого Октября.

Огромная работа была проделана Компартией Армении по подготовке и переподготовке партийно-советских кадров в период социалистической индустриализации и коллективизации сельского хозяйства.

21 Նույն տեղում, ց. 17, գ. 100, թ. 29։

22 Նույն տեղում, ց. 19, գ. 225, թ. 1։

Особая необходимость подготовки работников для сельских райкомов и райисполкомов, а также кадров для вновь создаваемых промышленных районов поставила перед ЦК КПА задачу расширения сети совпартшкол и курсов, применения новых форм и методов обучения партийного актива. Сотни выпускников совпартшкол, тысячи слушателей курсов переподготовки и активисты, обучавшиеся в разных звеньях партийно-политической учебы, массового заочного обучения, значительно оживили работу среди широких масс трудящихся, повысили уровень партийно-организационной деятельности как районных, так и их местных партийных организаций.